



# ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ

ՊԷՅՐՈՒԹ Դ. ՏԱՐԻ 15 ՓԵՏՐ. 933 № 3

**Անդամագրուեցէք Հայկ. Բարեգործ. Ընդհ. Միութեան, Ձեր խղճի պարտքը մասամբ կատարած կ՚ըլլաք Ազգին ու Հայրենիքին հանդէպ:**

K.Bogharian

SAHAG-MESROB, Revue Armenienne
Directeur-Responsable et Proprietaire
MIHRAN NADJARIAN
BEYROUTH (R.L.)

ساحاق — مسروب مجلة ادبية
صاحبهو مديرها المسؤول [ مهران نجاريان ]
[ المراسلات ]
باسم « ادارة مجلة ساحاق - مسروب » بيروت
في بناية بيضا: مار مخائيل شارع غورو

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | Տարկն. | Վեցմս: |
|---|---|---|
| Լիբանան Սուրիա եւ Ֆրանսա | 20 | 12 Ֆրանք |
| Արտասահման | 1,50 | 1 տոլար |

ՁԵՌՔԷ ՀԱՏԸ 5 Ս. Դ.

ԴՐԱՄ ԵՒ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՀԱՍՑԷՈՎ.—
M. Nadjarian
Av. Gouraud, St. Michel, Imm. Nicolas Cherayem
Beyrouth [R. L.]

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1—.ՍԱՀԱԿ--ՄԵՍՐՈՊի բաժանորդագրութիւնը ԿԱՆԽԻԿԷ:

2.— Բաժանորդագին ղրկել ԱՊԱՀՈՎԱԳՐԵԱԼ նամակով:

3.— Չ'հրատարակուած ձեռագիրներ չեն վերադարձուիր:

4—ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊի Ա.ին թիւը ստացող եւ չ'վերադարձնողները բաժանորդ կը նկատուին

5.— Ծանուցումներ կ'ընդունուին Հայերէն Ֆրանսերէն եւ արաբերէն լեզուներով:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.—Հայաստանի Սրբութները, 2.—Անողորմ Հարուածը Մ.Ն. 3—Պատ. Հաղորդագր. 4—Խոլամ մարզիկները, 5.—Նուպարեան մարզիկներ 6.—Հայաստանի ընթերցարանը, 7.—Հրդեհը, 8.—Ծանօթ. Վարժ. մասին 9.—Մարզական եւայլն:

# ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ

ԳՐԱԿԱՆ. ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

Պէյրութ Գ. Տարի 15 Փետրուար — Fevrier 1933 Թիւ 3 (19)

ԱՐՏՕՆԱՏԷՐ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԷՆ — ԽՄԲԱԳԻՐ

ՄԻՀՐԱՆ ՆԱՃԱՐԵԱՆ

Պէյրութ

SAHAG - MESROB « Revue Arménienne

Directeur - Responsable et Propriétaire

MIHRAN NADJARIAN

BEYROUTH (R. L.)


# ՄԱՅՐԵՆԻ ԵՐԿԻՐ


1400




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՔԱՈՒԹՆԵՐԸ


ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ Գ. ԴԱՐԱՆ

# ԱՆՈՂՈՐՄ ՀԱՐՈՒԱԾԸ

Մեր առաջին թիւով, Պէյրութի Կրթական և եկեղեցական ծանօթագրութեան բաժնին մէջ, քաղաքիս կեդրոն վրանաքաղաքը կոչած էինք իբր պատմական վայր և ծանօթագրութիւնը ըրած էինք յիշել ժէմբի Ս. Խաչ եկեղեցիէն ու Սահակեան Վարժարանէն։

Մեր այդ ծանօթագրութիւնը դժբախտաբար դամբան մը գործեց կեդրոն վրանաքաղաքին համար։

Այժմ այդ երեւոյթապէս արգահատելի իսկ ներքնապէս մեզ շատ սիրելի 800 ի մօտ աշխատաւորական տնակներն, իր ընդարձակ եկեղեցիով՝ շատոնց նախանձը իր վրայ հրաւիրող Անդրանիկեան մանկապարտէզովն ու նախակրթարանով հիմնովին փոշիացած - անհետացած են։

Փոքրիկ անզգուշութիւն մը՝ 800 ըն տանիքը անպատսպար դարձուց։

Հարուածը ուժգին և անողորմ էր, և այս յանկարծական դժբախտութեան դէմ դիմադրել՝ անկարելի։

Կարմիր բոցը մի քանի ժամուան ընթացքին մէջ հայ աշխատաւորին միակ ապաւէնն նկատուող խախուտ բոյնն իսկ մոխիրի վերածեց ու զայն ցուրտ հովին ծոցը նետեց։

Բայց այս անողորմ հարուածի պահուն չ'մոռցանք մեր սեւ թաթերով ի ԲԱՐՄԷ ԽԼԻԼ.. իրարու սիրտ բզբնտել եւ հայ անունը պատուել..։

Հրդե՜հ և աւա՜ղ... մէկուն պակասը միւսը լրացուց։

Այս մասին վարագոյրը կիսովին բացինք և վերստին կը գոցենք...,

Բարեբախտաբար, տխուր պատկերին քով՝ մխիթարական երեւոյթներն ալ անպակաս են։

Տնակուն կարմիր բոցերուն կայծերը չ'մարած, այրուող տնակներէն գոյացած աւեր մոխիրները իրենց ջերմութեան աստիճանէն գիծ մը իսկ չ'կորսնցուցած այրուող՝ բայց դաստիարակութեան ծարաւի հայ աշխատաւորը անմիջապէս, հիմնեց իր կրթարանը, միեւնոյն խանդավառութեամբ և զոհաբերութեան ոգիով մը։

Այսօր, ուրախ ենք ըսելու որ՝ մոխրացած կործանած Անդրանիկեան Մանկապարտէզն ու Սահակեան Վարժարանը կանգնած են աւելի ամուր հիմերու վրայ՝ քան առաջ, և հրդեհին զոհերը՝ առանց վարանումի իրենց մատաղահասակ փոքրիկներուն ձեռքը պատառ մը չոր հաց և թանկագին գիրքերը տալով ուրախ տրամադրութեամբ և գոհունակ սրտով մը ամէն առաւօտ կը ղրկեն դէպի կրթութեան վառարանը հանգչող մայրենի վարժարանը, ուր տեղ փոթորկած Նարատով հայ ուսուցիչները իրենց կ'սպասեն։

Մեզ համար զարմանալի չ'պիտի թուի, երբ մօտ օրէն հայ աշխատաւորը տեսնենք իր չէն տնակին մէջ, կրկին անգամ կռթնած իր չինող բազուկին։ Սոփկա հայուն չինարար ոգին բնական պատկերն է։

Արդէն մինչ ցարդ, հայ թէ օտար հաստատութեանց և անձնաւորութեանց կողմէ եղած օգնութիւնները իրենց որոշ արդիւնքը տուին, և մենք մեծապէս յուսահատած ենք որ, իր Մայր Երկրի բարգաւաճման համար տնայնապէս զարգանալու պատրաստուող հայ ժողովուրդը՝ ՀՐԴԵՀՈՎ ՉԻ ՄՈԽՐԱՆԱՐ։

Այսուհանդերձ, պէտք չէ որ օգնութեան գործը դադար առնէ և մեր մեծահարուստները իրենց քսակները լայնօրէն բանալու են այս հրկիզեալ ժողովուրդին առջեւ։

*Արտասահմանի հայ ունեւոր դասակարգին վրայ ծանր պարտականութիւն կ'իյնայ՝ ամէն կերպով օգնութեան փութալ եւ անօգնական չթողուլ իրենց արենակիցները։*

*Հոս, տեղն է որ չ'կրնար չ'ըլլար շնորհակալութեամբ եւ մասնաւոր երախտագիտութեամբ արձանագրել Ս. Պայծ. Թ. Ձ. Թ. Միւնիր Վահմ Բէնսայի Լիբանանի Հանր. Նախագահ Վսեմ Շարլ Տէպպասի եւ քաղաքիս Իրեւէլի ամենաբութիւններէն Օմար Պէյ Տաուքի յականչական նախիրատութիւնները։*

*Հարուածը որքան անզգալ հարուածէն գոյացած վէրքին բուժումը նոյնքան եւս առաւելակերելի է։*

*Մ. Ն.*

# ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

## Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
## Ի ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

**«Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս եւ Ծայրագոյն Պատրիարքի նախագահութեամբ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդ»էն 858 թուահամար եւ 25 Դեկտեմբեր 1932 թուականով «Եգիպտոսի Հայոց Կեդր. Վարչութեան» ուղղած հետեւեալ պաշտօնագրին տեղ կուտանք իր պատմական ծանօթութեանը համար:**

*Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը իւր Նոյեմբեր 26-ի գրութեամբ յայտնելով Ձեզ Նոյեմբերի 10ին Ս. Էջմիածնում գումարուած Ազգային Եկեղեցական Ժողովի կողմից կատարուած կաթողիկոսական ընտրութեան եւ նորա անունը Հայաստանեայց բոլոր եկեղեցիներում յիշատակելու մասին, ներկայիս աւելի մանրամասնութիւններով իրազեկ է կացուցանում Ձեզ Ժողովի գործունէութեան եւ որոշումներին առաջարկելով հաղորդել այն Ձեր ստորադրեալ եկեղեցական վարչութիւններին եւ հաստատութիւններին։*

*Պատգամաւորները հաւաքուել են սկսած Ս. Աթոռին Նոյեմբեր 5ին մեր Միութեան թեմերից եւ փոքր չափով արտասահմանից. Նոյեմբերի 6ին Պատարագից առաջ հոգեհանգստեան կարգ կատարուեց հանգուցեալ Տ. Գէորգ Ե. Կաթողիկոսի գերեզմանին վրայ։ Որտեղ պատարագիչն էր Տ. Տեղակալը, որ Հայր մերից առաջ քարոզ խօսեց Հայրապետական Աթոռի եւ Հայաստանեայց եկեղեցու նշանակութեան մասին, եւ ապա հանդիսադիր եղաւ Իջման սեղանի առաջ կատարուող Հայրապետական մաղթանքին։ Դրանից յետոյ նա երդուեցրեց բոլոր պատգամաւորներին ի դէմ Ս. Աջոյ կատարելու իրենց պարտքը ընտրութեան գործում։*

*Նոյեմբեր 7, 8, 9, Նախապատրաստական, ոչ պաշտօնական եւ մասնակի աշխատանքներ էին կատարւում ժողովի օրակարգին եւ կանոնաւոր ընթացքի նկատմամբ, իսկ պատգամաւորները ծանօթանում էին իրար հետ, այցելում հնադարեան վանքերն ու աւերակները։*

*Բուն ժողովներն սկսուեցան Նոյեմբերի 10ին առաւօտեան ժամը 11ին Տեղակալ Տ. Խորէն Արքեպիսկոպոսի նախագահութեամբ եւ վաթսուն եւ վեց պատգամաւորների մասնակցութեամբ։ Տ. Տ[illegible]*

լոյս Տ. Գէորգ Կաթողիկոսի յիշատակին հոգւոց ասելուց յետոյ՝ ընտրւում է ատենապետութիւն և այդ մանդատային յանձնաժողով՝ պատգամաւորների թղթերն ստուգելու համար։ Ատենապետութիւնը կազմուած էր վեց հոգուց. երեք ատենապետներ՝ Ստեփան Մալխասեան, Գեղամ Տէր Պետրոսեան և Լևոն Կիւմիւշկերտեան, քարտուղարներ՝ Սեդրակ Կանայեան, Ռուբէն աւագ քահանայ Բէկգիւլեան և Կոստանդին Գիւլնազարեան։ Մանդատային յանձնաժողովի անդամներն էին Տ. Մաթէոս Արքեպիսկոպոս, Տ. Ղևոնդ աւագ քահանայ Նալբանդեան, Տ. Սահակ աւագ քահանայ և Յովսէփ Միքայէլեան։

Պատգամաւորների յանձնարարականները ստուգութեան ենթարկելուց յետոյ նորոգւում է նիստը և հաստատւում է օրակարգը համաձայն հրահանգի ատենապետութեան, թողնելով նրանց քննութեան ենթարկելու կարգը։

1. Որոշումն Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան եղանակի,

2. Գերագոյն Հոգևոր Խորհրդի զեկուցումներ։

ա) Գերագոյն Հոգևոր Խորհրդի հաստատութեան գործունէութեան մասին,

բ) Մայր Աթոռի լուսաւորական կալուածների մասին,

գ) Հայաստանեայց Եկեղեցու սահմանադրութեան մասին,

3. Զեկուցումն Հայաստանեայց Եկեղեցւոյ բարեկարգութեան մասին,

4. Ընտրութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսի,

5. Ընտրութիւն Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամների,

6. Ողջոյն և գոհունակութիւն Ազգային Եկեղեցական Ժողովի կողմից Խորհրդային Հայաստանի Կառավարութեան։

Ապա Տ. Տեղակալը կարդում է Գերագոյն Հոգևոր Խորհրդի կողմից զեկուցում Նորա հաստատութեան և ընթացիկ գործունէութեան մասին։ Ժողովը յանձնարարում է ատենապետութեան բանաձև կազմել և բերել հաստատութեան։

Նոյն երեկոյեան նիստին Տ. Գարեգին Արքեպիսկոպոսը կարդում է Գերագոյն Հոգևոր Խորհրդի կազմած Սահմանադրութեան նախագիծը, իսկ Տ. Մաթէոս Արքեպիսկոպոսը Մ. Աթոռի նիւթական կարիքների մասին զեկուցումներ, ժողովը մտքերի փոխանակութիւնից յետոյ՝ յանձնարարում է ատենապետութեան որանց համար եւս բանաձևեր կազմել։

Այստեղ մէջ է բերւում ժողովի հաստատած բանաձևերը երեք զեկուցումների մասին, որոնք հաստատուած Նոյեմբերի 10ին երեկոյեան նիստում, իսկ մնացած երկուսը Նոյեմբերի 11ի առաւօտեան նիստում։

Գերագոյն Հոգևոր Խորհրդի հաստատութեան եւ գործունէութեան մասին ժողովը որոշում է.—

1. Ողջունել Գերագոյն Հոգևոր Խորհրդի հիմնումը և հաւանութիւն տալ 1924 թւի Հայրապետական կոնդակին որով հիմնւում է Խորհուրդը։

2. Հաւանութիւն տալ Գերագոյն Հոգևոր Խորհրդի գործունէութեան նորա հիմնումից մինչև այսօր։

3. Ընդունել Գերագոյն Հոգևոր Խորհրդի ներկայ կազմի հրաժարականը՝ շնորհակալութիւն յայտնելով նորա [?] ջանալից և օրինակելի գործունէութեան համար, խնդրելով այդ պաշտօնը ժամանակաւորապէս շարունակել մինչև նոր կազմի ընտրութիւնը ներկայ պատգամաւորական ժողովի կողմից։

[Շարունակութիւնը յաջորդ թիւով]

ԳՈՐԾԱԿԱԼ Կ'ՈՒԶՈՒԻ

Լիբանանի եւ Սուրիոյ շրջաններուն, ինչպէս նաեւ արտասահմանի համար «Սահակ—Մեսրոպ»ին գործակալներ կ'ուզուի։

Դիմել Խմբագրութեան։



ՊԷՅՐՈՒԹԻ ՔԱՂ[illegible]Մ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԽԱՃՈԿ[illegible]Տ[illegible]ՐԸ ՄԱՐԶԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ ԿԸ ԿԱՏԱՐԵՆ



Պէյրութի Նուպարեան Մարզիկներ



ԵՐԵՒԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՍՐԱՀԸ

# ՀՐԴԵՀԸ

(Վրանճախաղաճի Հրկիզումին առիթով)

Իրիկուն մ'է ձմեռնային, ցուրտ, անամպ.
Իրիկնամուտն շառագունած յոռալով.
Կեանքն է գնում, ու երթեւեկն երագ երագ
Մին' իր գործէն, միւսն պտոյտէն մերձակայ:
Հիւղաւանն է միշտ արթուն
Ծրագներովն իր ազատ,
—Անոր աչքերն արգասաւան.—
Որ տախտակեայ տնակներու ճեղքերէն
Կ'անդնշմարուին ցոլցլելով իրենց բեկ բեկ: —
Կրպակ, խանութ բաց են դեռ.
Ահա Հայրեր-կը կգեն
Համեստ ճաշիկն' որ կազդուրուի ընտանիքը ան-
սոազ·
Անանք կ'ընթրեն գոհունակ...
Ո՛վ Հայ պանիր աղքատի,
Թշուառներու երգ ու խինդով համեմուած.
Գուցէ՛ չարժէք նախանձն միշտ ունեւորին.
Գուցէ ձեր այս նախանձոյոյզ ապրումին
Վարայ խինար Դամոկլէս:—
Մերթ լսելի կ'ըլլայ կացթիւնն երգերու,
Մերթ խրախճանքի աղաղակներ հաչեց-ուորճ,
Ինչպէս ամէն օր:
Ո՞վ կ'ըմբռնէ թէ այս խցիկներուն մէջ խարխուլ
—Ամբաններու իսկ անարժան.—
Վեհ հոգիներ կը բնակին
Որ տառապան կը փ-խեն
Մարմանդներու արգաւանդ:

***

Ժամացոյցը ժամը ինը կը զարնէ.
Ա՜լ ժամանակ է ննջելու.
Լոյսերը տակաւ կը մարին
Ու կ'անհետին զուարթ կանչերն իրիկուան
Առաջիններն կը փոխանակեն աստղեր՝ շողարձակ
Իսկ երկրորդներ՝ մժեղներու բզզիւնն անդուլ
Մարդիկն ամէն հետզհետէ կը ննջեն.
Ալ անդորր է ամէն կողմ:—

***

Փուռի մը մէջ զանխուլ անկիւնն
Կը գործնուի մինչդեռ կայծը հրդեհին.
Փուռ' որ ցայսօր հաց ջամբած էր բազ-
մութեան

Կը պատրաստուի անոնց հացը. Խըճի, ըլլայ դա-
ւաճան.

— Չէ՞ք գիտեր որ խըլիկներն այս ածխարանէ,
ղաղփաղփուն
Ընդելուզուած շղթայակերպ իրարու,
Պիտի իսկոյն փոխանցէին դաժան հուր մէկմէկու
Ինչո՞ւ եղաք դաւաճան։—
Ահա մուխը դասալքութեան կը բարձրանայ ցու-
կողէդ
Ու Գաղտնաբար կը սողոսկի մինչեւ ռունգերն
ննջողին.
Ու յայտնօրէն կը տարփողէ գործած ոճիրդ ա-
մէնուն

Շփոթ, ընդոստ վեր ցատկելով դրկիցդ հետ
Ծուխէ, մուխէ շնչահեղձ,
Կը դիմէ իսկոյն դէպ ի դուռ.
Բայց ո՜վ երկինք
Աստիճաններու դարշապարէն
Կը խոյանայ բոցն ամենակուլ,
Սպառնալով վաղվաղակի լափլիզել
Հիւղակին հետ և հոն ննջող մատաղ կեան-
քերն։

Ու խեղճ հայրը սահմռկած
Կը տարփոխէ այս բոցն անեղ նոյն հետային,
Ու ծայր կու տան իրարանցում, վայնասուն,
Ու կը լսեն զօրեղ աղաղակներն ազդարարար։—
Վայնասունը կ՚արձագանգէ ընդհանուր.
Զանգակն իսկոյն ահազանգը կը ղօղանջէ.
Բնակիչներն կը մատնուին խուճապի.
— Հրդե՜հ, Հրդեհ, — աղաղակ կը գոչէ լալով.
ՀՐԴԵՀ . . . . . . .

Ու ահա ընդհուպ
Իր ահռելի ու դաժան
Կերպարանքը ցցած էր հիւղակներէն ալ
բարձր։

«Կեանքը փրկէ.»
— Այդ էր իմաստն այդ րոպէին ամէն հասակին.
Ու կը պոկուին օրօրոցէն ննջող ման-
կիկներ.
Ու ամէնքը, մեծ ու պզտիկ, խառ-
ն ի խուռն
Կը հեռանան, կը փախչին, կը ճողոպրին,..
Բայց դէպի ո՞ւր դէպի ո՞ւր.
Ահա մահը հրեղէն կը հալածէր ամէնքն ալ
Կը հալածէր դէպի դաշտը ամայի
Հազարաւոր այս խեղճերն
Մինչդեռ բոցերն ճարճատիւնով, ցնծելով մը

դիւային
Կը կլանեն ու կը սպառեն իրենց սիրական համ-
բակն

Ջոր տախտակն...։
Ահա տուն յուզեալ ծով մը հրեղէն,
Աւելի քան հինգհարիւր տուն փայտեղէն
Կը գլորին ոտքերուն տակ փրփրերախ...
Ու հէգ ամբոխն հազարներու
Կը տեսնայ անմխիթար։
Գոյքերուն հետ, տուներուն հետ,
—Իրենց միակ յոյսերուն հետ,
Կ'այրի անոնց սիրտն կարեվէր։
Ի՛նչ բան կրնայ առկալ այսքան ջերմութեան.
Ամէն ինչ, ամէն ինչ կը մոխրանայ.
Երկաթ ու գամ իսկ դիմացարձ
Կը քսասին, կը խամրին.
Անօգուտ են հրշէջներ, ու թափած ջուրերն ուղ-
խորէն։

Մուխի սիւներն ամպահում
Կ'երթան լուր տալ երկինքին.
Բայց երկինքն է տաղտաղորդ։
Ո՞ւր են ամպերն երէկուան,
Ո՞ւր անձրեւներն յորդահոս.
—Ա՛ստուած, միթէ ժողովուրդիդ այս թշուառ
Մեղքերն հատուցանելո՞ւ Սոդոմացւոց մեղքե-
րուն.

Մեղքեր, զորոնք գործել կուտան
Աղքատութիւնն դրուժան։
Անհատասիկ Հիւղաւանը
Անոնց աչքերուն դէմ մոխրակոյտ,
Եւ հոգիներն անոնց
Ջերդ փիւնիկներ մոխիրի տակ անթեղուած։

Ց. Ե. ՄԱԳԻՍՏՐՈՍ

# ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՔ

## ՊԷՅՐՈՒԹԻ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ

### ՄԵՍՐՈՊԵԱՆ ՀԱՅ Ր.Օ.Գ. ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆ
(Նախակրթարան եւ Մանկապարտէզ)

1922—ին հիմնուած է։ 1928—ին տը-նօրէնութիւնը յանձնուեցաւ Սոֆիայի Մեսրոպեան ճեմարանին տնօրէն Գ. Գր. Գալուստեանին։ Այս վարժարանը տեսակ մը Որբանոց է. որովհետեւ ամէնէն թշուառ ծնողներու զաւակ կը յանձնեն։ Այս իսկ պատճառաւ, միշտ ունե-

ցած է պիւտճէի բաց: Այս դպրոցի Թաղականութեան և տնօրէնութեան օգնութեան հանել՝ կը նշանակէ 375 երկսեռ աղքատ աղայոց տրուած կրթական գործին վրայ գուրգուրայ և սատարել ցեղին պահպանման Սրբազան Նպատակին։

Նախակրթարանը ունի 104 մանչ 96 աղջիկ

Մանկապարտէզը ունի 91 մանչ 84 աղջիկ։

Ուսուցչական կազմ,—

Նախակրթարան.

Տնօրէն պ. Գրիգոր Գուտուլեան.

Աւագ-ուսուցիչ՝ Պ. Յարութիւն Տէր Յակոբեան.

Պ. Մկրտիչ Տայիկեան

Պ. Դանիէլ Փէքմէզեան,

Օր. Հայկանուշ Սարգիսեան,

Օր. Ռեբեկա Ժամագործեան

Տիկ. Հայկուհի Կիւլիւզեան,

Մանկապարտէզի մէջ.

Օր. Փրլանդին Հաճի Յակոբեան,

Օր. Գոհար Գունտազճեան,

Օր. Երանուհի Պողատարեան,

Նախակրթարանը բացի Նախապատրաստական դասարանէ մը՝ ունի նաև Ա.—էն մինչև Զ. դասարաններ։

Աշակերտներէն մանկապարտէզի բաժինին մէջ 3 Ս. ոսկի, իսկ Նախակրթարանի բաժինին մէջ 4—5 Ս. ոսկի կը գանձուի։ Երեք զաւակ ունեցողին մէկը չի վճարեր. որբ և որբեւայրիներու թիւը 100 էն աւելի է։

# ՆՈՐ ՀԱՃԸՆԻ

## ՀԱՅ ԱԶԳ. ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Այս Վարժարանը նոր բացուած է. այսինքն՝ 1932 Հոկտեմբերի սկիզբները, և չորս ամիսներու կեանք մ'ունի միայն, պիւտճէն է 500 սուրիական ոսկի։

Աշակերտութեան թիւն է 150, երկսեռ. որոնցմէ կէսը Նախակրթարանէ և կէսը Մանկապարտէզի ընթացքներուն կը հետեւին։

Վարժարանի տնօրէն—Ուսուցիչն է Պ. Յովհաննէս Հէքիմեան, ծանօթ ուսուցիչը. ունի երկու օգնական Վարժուհիներ, Տիկին Արաքսի Կէօքօղլանեան և Լուսածին Պիւլպիւլեան։

Հոգաբարձութիւնը կը բաղկանայ հետեւեալ անձերէ. Տէր, Տիար Զաքարիա Զաւտարեան՝ Ատենապետ, Մինաս Ճէրէճեան՝ Ատենադպիր, Եփրեմ Ծլիկեան Գանձապահ. Միսաք Վայէճեան՝ Խորհրդական, Մինաս Գըրգզաչարեան՝ Խորհրդական։

Հասոյթի աղբիւրներն են. աշակերտներու վճարած դպրոցական թոշակը, հանդէսներու հասոյթները. հանգանակութիւն, ու թերեւս Բարեգործականի նպաստներ։

Իւրաքանչիւր աշակերտի տարեկան ծախքն է 333 դուրուշ սուրիական։

Նախակրթարանի աշակերտները կը վճարեն 300 դուրուշ սուրիական իսկ Մանկապարտէզինները 200 դուրուշ, սակայն 100էն 20ը չվճարող չքաւորներուն զաւակներն են:

ԽՄԲ.— Կը հրաւիրենք Լիբանանի և Սուրիոյ Թեմերուն պատկանող երեք յարանուանութեանց վարժարաններու տնօրէններն և հոգաբարձական մարմինները, որ իրենց դպրոցներու մասին համառօտ-ամփոփ մէկ տեղեկագրութիւն յղեն խմբագրութեանս։

Ստացուած տեղեկագրութիւններուն բոլորն ալ իրենց կարգին պիտի հրատարակուին,

## ՄԱՐԶԱԿԱՆ

### «ԱՆԴՐԱՆԻԿ»

*Շարժման մէջ է: «Վասպուրական»ի և Զ. Ո. Մ. «Վահագն»ի դէմ յաղթութիւններ ապահովեց: Վերջինիս հետ ունեցած մրցումը անկատար անցաւ՝ հակառակ երկու կոլ նշանակած ըլլալուն և խաղի բոլոր ատենը իրենց կողմը ար-լացած տեսանուելուն: «Անդրանիկ» ին տղաքները դատաւորին կողմնակալութեան կը վերագրեն խաղը կիսատ ձգել ըլլալնուն պատճառը, թէև պաղարիւնութեամբ խաղը շարունակել աւելի լաւագոյնս պիտի ըլլար:*

### «ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ»

*Հին խանդավառութեամբ սկսան գործել և «Անդրանիկ»էն պարտուելնին երբեք յուսահատեցուցած չէ զիրենք: Այս միութեան տղաքներուն մէջ մի քանի կարևոր ույժեր կան, բայց հարկ է որ՝ զգուշանան արտաքին ույժերու կռթնելէ:*

### Հ. Մ.
### Մ.

*Միութիւնը իր հաւաքական գործունէութեան դադար չէ տուած, միայն, ֆութպոլի խումբին մէջ գտնուող տղաքներէն ոմանք անկեղծ կեցուածք չ'ունին և իրենց այդ ընթացքը պատճառ կը հանդիսանայ, որ աղայոց խանդն ու եռանդը ամլութեան դատապարտուի:*

*Այս միութեան մասնաճիւղերը աւելի խանդավառութեամբ գործի լծուած են:*

### Հ. Մ. Ը. Մ

*Մօտերս մասնաւոր և ուշագրաւ մրցում մը չունենալու աւելի կազմակերպչական գործերով զբաղուած է. յու- ամլութիւն չի գիտեր և լաւ առաջնորդներով կը ղեկավարուի, որոնք իսկապէս գովելի նախանձախնդրութեամբ մը կը ջանան Հ. Մ. Ը. Մ ի վարկը միշտ բարձր պահել և բոլորին նախանձը միութեան վրայ հրաւիրել:*

## ՀՐԱԺԱՐԱԿԱՆ

Ինծի վերապահելով պատճառը, կուզեմ սոյն տողերով իմ հրաժարականս տալ Ս. Նշան Ազգ. Վարժարանի Շրջանաւարտից Երկսեռ Միութենէն:

10 Փետր 1933 ԴԱՒԻԹ ՄԱՆՈՒԿԵԱՆ

## ՓՈԽԱԴՐՈՒԱԾ

Լիբանանի տպարանի տնօրէնութիւնը մեզի կ'իմացնէ թէ իր տպարանը փոխադրուած է Մա՛ռ աթ Իպրահիմ Նաթուրին շէնքին մէջ:

Կը թելադրուի յաճախորդներուն որ յետ այսու իրենց տպագրական եւ տուփերու շինութեան գործերուն համար դիմել վերոյիշեալ հասցէին:

## ՄՐՑԱՀԱՆԴԷՍ
### ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ

*Յունուար 21 ին օրը, Ուէսթ Հոլին մէջ մրցահանդէս մը, որուն մասնակցեցան՝ Սահակեան, Ս. Նշան Ազգ. Վարժարաններու, Ամերիկեան համալսարանի ՑՐԻՆՉ ՍԹՈՒԼԻ և Նախակրթարանի և Հայ Աւետ. Մանչերու բարձրագոյն վարժարանի աշակերտները:*

*Երգուածները՝ ներկայ հայ և օտար խուռն բազմութեան բուռն ծափահարութեան արժանացան:*

*Առաջնութիւնը շահեցան Ամերիկեան Համալսարանի Նախակրթարանի աշակերտութիւնք, իսկ երկրորդութիւնը Հայ Աւետ. Մանչ. Բարձր. Վարժարանի աշակերտները:*

Առաջնութիւն չունեցող աշակերտութեան տրուեցաւ արծաթեայ գաւաթ մը։

Ծն.— Մեր աշուղածին համաձայն, յիշեալ մրցահանդէսին համար նախօրօք ներկայացուած պայմանները յարգուած չէին և դատաւորական վճիռը եղած է անարդար։

## Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ
### ՕԳՆՈՒԹԻՒՆԸ

Կը տեղեկանանք թէ Բարեգործականի Եգիպտոսի Շրջանակային Վարչութիւնը եղած չիմացումին ինչ առաջ երթալով՝ հեռագրով հրահանգ տուած է հրդեհէն աղէտեալ հայրենակիցներուն բաժնել Բէյլէկեան Որբանոցի հագուստեղէնի, ճերմակեղէնի, անկողիններու և խոհանոցի առարկաներու մթերքը։

### ԱՂԷՏԵԱԼՆԵՐՈՒ ՏԵՂԱՒՈՐՈՒՄԸ

Անպատսպար մնացած գաղթականներէն 1500 հոգի տեղաւորուած են Գարանթինայի մէջ, իսկ մնացեալները՝ զանազան տեղեր, ինչպէս՝ Նոր Սիս, Նոր Հաճըն, Էշրէֆիէ, Անդրնէհր, Հայաշէն ևլն.։

Խնամատարական Մարմինը ձեռնարկած է հանգանակութեան և արդիւնքը գոհացուցիչ կը տեսնուի։

*** Ազգերու Դաշնակցութեան Ներկայացուցիչ Պ. Պրիւնիէ, որ Հիւսիսային Սուրիա կը գտնուէր, աղէտին լուրը առնելուն պէս, Պէյրութ գալով տեղաւորման գործի ձեռնարկեց։

Պ. Պրիւնիէ ըսած է հետաքրքրուիլ աղէտեալներու վիճակով և պէտք եղած ծանօթութիւնները ղրկած Ժընէվ Պ. Բոնսօի հետ երկար տեսակցութիւն մը ունենալէ վերջ. Պ. Պրիւնիէ այցելեց Գարանթինայի և միւս թաղերու աղէտեալներր։

Սուրիոյ զանազան շրջաններէն եւս ամէն օր օգնութիւններ կը հասնին եւ ամէն տեղ հանգանակութիւններ կ'ըլլան։

Պ. ՊԵՏՐՈՍ ՊԱՍՏՐՄԱՃԵԱՆ
ԸՆԴ
ՕՐ. ԼՈՒԻԶ ՇԻՇՄԱՆԵԱՆ
Ամուսնացեալ

Ճիւպէյլ

Մեր ջերմագին շնորհաւորութիւնները

## ԱԶՔԸ ԼՈՅՍ
### ԵՐԳԻ ՍԻՐԱՀԱՐՆԵՐՈՒՆ

Բազմաթիւ դիմողներու փափաքին գոհացում պիտի տրուի։

Մամուլի տակ է և արդէն 150 էջ լոյս տեսած է։

Արարատ գրպանի երգարանին

Ա. և Բ. միացած հատորներուն Գ. տպագրութեան թիւը, ճոխացեալ և բարեփոխուած՝ Փարակազմ, ընտիր թուղթ և մաքուր տպագրութիւն, 100 է աւելի Ազգ. Յեղափոխական, և պետական անձերու գունաւոր նկարներով զարդարուած աննախընթաց հրատարակութիւն որ կարժէ ունենալ ամէն անձ և ընտանիք իր տանը մէջ։ Գինն է 100 Ս. Դ.

Դիմել միայն Կ. Տօնիկեան Գրատունը,

Րիւ Նահր—Պէյրութ

### ԿԵՐԱԿՈՒՐԻ
### ՍԻՐԱՀԱՐՆԵՐՈՒՆ

Ձեր բանջարեղէնի գնումները կատարեցէք միմիայն հայերուն վստահութեան արժանացած.

Մուսթաֆա էֆ. Մուճէյմճէի խանութէն։

Սուգ—էլ—Նուրիէ թիւ 86

Աժան գին և թարմ ու մաքուր բանջարեղէն։

# ՍԻՆԵՄԱ ՔՐԻՍԹԱԼ-CINE CRISTAL


(Պուրճ—Ոսկերիչներու շուկային կից)

**ԹԱՐՕՅԱՆԻՑ ԵՒ ԶԱՓԱԶԱՆՑ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՄԵԾ ՖԻԼՄ ՄԸ**

ՓԵՏՐՈՒԱՐ 13-էն 19

Ամէն երիտասարդ այս ֆիլմը տեսնելու է:

Ընտանեկան շրջանակներու մէջ գործածեցէ՛ք
եւ ձեր հիւրերուն հրամցուցէք միայն

**LAMBERTI-BIÈRE**

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳԱՐԵՋՈՒՐՆԵՐՈՒ ԹԱԳԱՒՈՐԸ

*Յանուկով ուրիշ մը գնելէ առաջ անգամ մը մեզի դիմեցէք, ամառնային*
*ունիք նպաստաւոր գնով մը, լաւագոյն գարեջուրը ունենալու համար:*
*Մեր մշտական յաճախորդներուն, ձրիօրէն կը նուիրենք,*
*գարեջուրի արժէքաւոր գաւաթներ, անձեռոցներ,*
*գրպանի դանակներ, գրիչներ եւայլն:*
*Փորձ մը կը բաւէ ձեզ համոզելու համար: Սուրիոյ եւ Լիբանանի Ընդհ. Գործակալ.*

**Ն. ՔԷՇԻՇԵԱՆ**

Rue des Poste N° 123

Տոքթ. ԿԱՐԱՊԵՏ ՏԷՎԷՐՄԱՆՃԵԱՆ

ՎԿԱՅԵԱԼ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Պուրճ--Օրէլ Հէլիօբոլի

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ.—

Առաւօտ ժամը 9—12
Կէսօրէ վերջ » 2—6

**ԿԱՇՄԱՏՈՒՆ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ**

*Ճաշակաւոր գործ, մատչելի գին եւ*
*կատարեալ ճշդապահութիւն փորձի*
*համար դիմեցէք*

**ԿԸ ՓՆՏՌՈՒԻ**

*Բնիկ Ափիոն Գարահիսարցի Գէորգ*
*Տօնէլեան, կը փնտռէ՝ Աւետիս*
*Տօնէլեանը, 1922 Իզմիրի ջարդի*
*առեն կորսուած էր: Լա-*
*բաշխիներու քէմբը ըլլալ*
*կը կարծուի և ժամա-*
*նակ մը «Կայծակ»*
*խումբին մէջ ֆութ-*
*պոլիստ էղեր:*

*Մանրամասնութեան համար դիմել*
*«Սահակ - Մեսրոպ» խմբագրութեան,*
*Գրատուն Նաճարեան, Անդր--Նահր:*


Թերթիս Պէյրութի ցրուիչն է Պրն. Սարգիս Նաճարեան

[204.]

1400


# Ա. ՀԱՃԱՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ՄԱՍՆԱԳԷՏ
ՊԷՅՐՈՒԹ



ԱԿՆՈՑԱՎԱՃԱՌ
ՊՈՒՐՃ-ԹԻՒ — 48.

ԿԸ ՊԱՏՐԱՍՏԷ ԲԺՇԿԱԿԱՆ ԴԵՂԱԳՐԵՐՈՒ ՀԱՄԱՁԱՅՆ ԳԻՏԱԿԱՆ ՄԵԹՈ-ՏՈՎ ԱԿՆՈՑՆԵՐ։ ՈՒՆԻ ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ZEISS — PUNKTAL ԱԿՆՈՑԻ ԱՊԱԿԻՆԵՐԸ, ՀԵՌԱԴԻՏԱԿՆԵՐԸ ԵՒ ԼՈՒՍ. ՄԵՔԵՆԱՆԵՐԸ.

ԽՆԱՄԵԱԼ ԳՈՐԾ, ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆ

# ԳՐԱՏՈՒՆ ՆԱՃԱՐԵԱՆ

Ը Ն Գ Ի Ր — Ն Է Հ Ր

ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԳՐՔԵՐՈՒ ՃՈԽ ՄԹԵՐՔ

ԾԱՆՕԹ. — «Սահակ—Մեսրոպ»ի պէյրութի միակ ցրուիչն է Գ. Սարգիս Նաճարեան։ «Սահակ Մեսրոպ» հատով գնել ուզողները թող դիմեն յիշեալին։

ՕՐԻՈՐԴՆԵ՛Ր, ՏԻԿԻՆՆԵ՛Ր
ԵՒ ՊԱՐՈՆՆԵ՛Ր
ՄԻ՛ ՄՏԱԾԷՔ, ԱՅԼ ՈՒՂՂԱԿԻ
ԴԻՄԵՑԷՔ
[illegible]
ՄԱԱ՛ՐԱՏ
Ու ձեր ճաշակին համաձայն կօշիկ մը գնեցէք, վստահաբար՝ գո՛հ պիտի մնաք։

ՏՔԹ. Ս. ՉԱՈՒՇԵԱՆ
ՎԵՐԱԲՈՅԺ—ՄԱՆԿԱԲԱՐՁ
ՎԿԱՅԵԱԼ ԲԱՐԻԶ
ՊԷՅՐՈՒԹ

ԳՐԱՏՈՒՆ ՆԱՃԱՐԵԱՆ
ՆԱՀՐ — ՊԷՅՐՈՒԹ
Կ՚ՍՏԱՆՁՆԷ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԹԵՐ-ԹԵՐՈՒ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ։

ՏՔԹ. ԳԱՐԵԳԻՆ ԱՇԸԳԵԱՆ
ՍՏԱՄՆԱԲՈՅԺ — ԱՆԴՐ — ՆԱՀՐ


ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է
ԵՒ
ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ
ԱՒԱՐԱՅՐԻ ԱՐԾԻՒԸ
ԿԱՄ
ՎԱՐԴԱՆԱՆՔ
ՈՂԲԵՐԳ
( 5 Արար 4 պատկեր)
ՀԵՂԻՆԱԿ
ԱՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

Ստանալու համար այժմէն պէտք է դիմել՝
Կ. Տօնիկեան Տպարանը Պէյրութ։


ՏՊԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆ ՄԱ՛ԱՐԱԹ ՊԷՅՐՈՒԹ